

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ
Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

Սույն կանոնները մշակված է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության (այսուհետև՝ Նախարարություն) կողմից, <Կրթության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ կետի և 37-րդ հոդվածի 9-րդ կետի և <Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում հեռակա ուսուցման կարգի> 5-րդ կետի համաձայն:

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունները (այսուհետև՝ բուհերը) հեռակա ուսուցման ընդունելություն են կատարում համաձայն ՀՀ կառավարության կողմից 2007թ. օգոստոսի 30-ի N 1038-Ն որոշմամբ հաստատված մասնագիտությունների ցանկի:
2. Հեռակա ուսուցումը հանրապետության բուհերում կազմակերպվում է վճարովի հիմունքներով: Ուսման վարձի չափը սահմանում է բուհը՝ առկա ուսուցման համապատասխան մասնագիտության համար հաստատված վարձի սահմաններում: Մանկավարժական մասնագիտություններով նպատակային տեղերում ընդունվողների համար ուսման վարձը սահմանվում է 50 հազար դրամից ոչ ավելի:
3. Հեռակա ուսուցում իրականացնող բուհերում ներդրվող մասնագիտությունների ցանկը և հատկացվող տեղերի քանակը հաստատվում են ՀՀ կրթության և գիտության նախարարի (այսուհետև՝ նախարար) հրամանով:
4. Հեռակա ուսուցում իրականացնող բուհը, համաձայն սույն կանոնների, տալիս է իր հայտարարությունը:
5. Հայաստանի Հանրապետության պետական բուհեր հեռակա ուսուցմամբ կարող են ընդունվել միջնակարգ, միջին մասնագիտական, նախնական մասնագիտական (արհեստագործական) և մասնագիտական տեխնիկական կրթություն ունեցող անձիք՝ առանց տարիքի սահմանափակման:
6. Հեռակա ուսուցմամբ բուհ ընդունված արական սեռի ուսանողները չեն օգտվում ժամկետային զինվորական ծառայության տարկետման իրավունքից:

**II. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅՏԱԳՐՈՒՄ ԵՎ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ**

7. Հեռակա ուսուցման ընդունելության քննությունները (այսուհետ՝ քննություններ) կազմակերպում է բուհը: Քննությունների կազմակերպումը և անցկացումը վերահսկում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն):
8. Դիմորդներն իրենց ընտրությամբ կարող են հայտագրել և մասնակցել միայն տվյալ քաղաքի մեկ բուհի մեկ մասնագիտության ուսուցման մրցույթին՝ հանձնելով այդ մասնագիտության համար սահմանված քննությունները: Ընդունելության մրցույթը կատարում է յուրաքանչյուր բուհ՝ ըստ մասնագիտությունների հատկացված տեղերի և միավորների:
9. Քննատախտակով նախատեսված օրն անհարգելի պատճառով քննության չներկայացած դիմորդներին չի թույլատրվում մասնակցել տվյալ առարկայի քննությանը: Հարգելի պատճառով (փաստաթղթով հաստատված) քննության չներկայացած դիմորդներին հնարավորություն է տրվում այն հանձնել, եթե քննատախտակով տվյալ առարկայի քննությունները չեն ավարտվել:
10. Ընդունելության քննությունների փաստաթղթերը հանձնելիս դիմորդը վճարում է 1500 դրամ՝ փաստաթղթերի ընդունման և ձևակերպման համար: Քննությունների կազմակերպման և անցկացման նպատակով յուրաքանչյուր քննության համար դիմորդը վճարում է 1500 դրամ: Ընդունելության քննությունների վճարից ազատվում են նպատակային տեղերի մրցույթի հավակնորդները և 29-30-րդ կետերով սահմանված արտոնություններից օգտվող դիմորդները: Անկախ քննությանը մասնակցելուց և արդյունքից՝ քննության համար վճարված գումարը չի վերադարձվում: Դիմորդի քննությունների ժամանակացույցը կախված չէ փաստաթղթերը հանձնելու օրից:
11. Դիմորդների՝ քննություններին, ըստ մասնագիտությունների մրցույթին մասնակցելու դիմում-հայտերը և ընդունելության քննությունների վճարը ընդունում է համապատասխան բուհը:
12. Քննությունների վերահանձնում չի թույլատրվում:

III. ՔՆՆՈՒՅՑՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՈՒՄ

13. Ընդունելությունը *բուհերում* կատարվում է՝
 - ա) նպատակային՝ ՀՀ հանրակրթական դպրոցներում աշխատող բարձրագույն կրթություն չունեցող ուսուցիչների համար: Մրցույթով անցած դիմորդների հետ կնքվում է եռակողմ պայմանագիր (դիմորդ-բուհ-մարզպետարան) ուսումնառության շրջանում համապատասխան դպրոցում աշխատելու վերաբերյալ,
 - բ) ըստ մասնագիտությունների հատկացված տեղերի, ՀՀ կրթության և գիտության նախարարի կողմից հաստատված քննությունների ցանկի և սույն կանոնների համաձայն:
14. Հանրակրթական առարկաներից քննություններն համապատասխան բուհերում անցկացնում են բուհի կողմից ներկայացված և նախարարի կողմից հաստատված առարկայական հանձնաժողովները՝ 2010թ. առկա ուսուցման առարկայական ծրագրերով և գիտելիքների գնահատման չափանիշներով:

15. Արվեստի, ֆիզիկական կուլտուրայի և ճարտարապետության մասնագիտությունների քննություններն անց են կացվում տվյալ բուհի մշակած և Նախարարի հաստատած մասնագիտական ծրագրերով և գնահատման չափանիշներով:
16. Քննությունների քանակը սահմանվում է երկու մրցութային քննությունից ոչ պակաս:
17. Ընդունելության քննությունները գնահատվում են 20 միավորային համակարգով: Դրական են համարվում ութ և բարձր միավորները: Մինչև ութ միավորի դեպքում՝ գնահատականը ամբողջացվում է (կլորացվում է, օրինակ՝ 7.5 միավորը հավասարվում է 8.0 միավորի) հոգուտ դիմորդի՝ ապահովելով դրական միավորի վաստակումը: Ութից բարձր միավորները գնահատվում են տասնորդական մասի պահպանումով՝ տվյալ առարկայի գնահատման չափանիշներով սահմանված քայլերին համապատասխան: Մրցույթին մասնակցում են այն դիմորդները, ովքեր տվյալ մասնագիտության համար նախատեսված քննություններից ստացել են դրական միավորներ:
18. Դիմորդները կարող են պահպանել 2010թ./2009թ./ <Հայոց լեզու, գրականություն>, <Հայոց պատմություն>, <Ընդհանուր պատմություն>, <Քիմիա>, <Կենսաբանություն>, <Ֆիզիկա>, <Աշխարհագրություն>, <Օտար լեզու> (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, իսպաներեն, իտալերեն, պարսկերեն լեզուներ), <Ռուսաց լեզու> և <Մաթեմատիկա> առարկաների միջնակարգ լրիվ ընդհանուր կրթական ծրագիր իրականացնող հաստատության միասնական քննության և 2010թ. կենտրոնացված համակարգով հանձնած քննությունների դրական գնահատականները՝ իրենց ցանկությամբ: Դիմորդին իրավունք է վերապահվում, պահպանելով նաև 2010թ. կենտրոնացված և միասնական կարգով հանձնած քննական առարկայի/ների գնահատականը/ները, տվյալ առարկայից/ներից հանձնել քննություն: Այն դեպքում, երբ դիմորդը ստանում է ավելի բարձր գնահատական, հաշվի է առնվում հանձնած քննության արդյունքը:
19. Այն մասնագիտությունների գծով, որոնց քննությունների անվանացանկում առարկաները նշված են մեկ և երկու աստղանիշով, մրցույթին մասնակցելու համար.
- ա) 1999-2000 և հետագա ուսումնական տարիների շրջանավարտ դիմորդների համար մրցութային և ոչ մրցութային քննությունների գնահատականներ են համարվում միջնակարգ կրթության ատեստատի, միջին մասնագիտական (հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիմքով) կամ նախնական մասնագիտական (արհեստագործական) և մասնագիտական տեխնիկական (հիմնական ընդհանուր կրթության հիմքով) ուսումնական հաստատությունների ավարտական փաստաթղթերի պետական ավարտական քննական գնահատականները,
 - բ) 1998-1999 ուստարվա շրջանավարտների համար՝ միջնակարգ կրթության ատեստատի, մասնագիտական տեխնիկական և միջին մասնագիտական հաստատությունների ավարտական պետական քննական գնահատականները, իսկ քիմիայից և կենսաբանությունից՝ տարեկան գնահատականները (նաև նախորդ տարիների շրջանավարտների համար),
 - գ) հայոց լեզվից և մաթեմատիկայից՝ 1996 թվականին և դրանից հետո հանձնված քննությունների գնահատականները,

- դ) մինչև 1997-1998 (ներառյալ) ուսումնական տարվա շրջանավարտ-դիմորդների միջնակարգ կրթության աստեսատի քիմիայի, կենսաբանության և ֆիզիկայի (20 միավորային համակարգով չգնահատված) տարեկան գնահատականները համապատասխանաբար հավասարեցվում են հետևյալ միավորներին՝
- <3>-ը համարժեք է 13 միավորի,
 - <4>-ը համարժեք է 17 միավորի,
 - <5>-ը համարժեք է 20 միավորի,
- ե) 1999-2000 ուստարիների այն շրջանավարտները, ովքեր դպրոցում բնագիտական առարկաներից չեն ընտրել հայտագրած մասնագիտությանը համապատասխանող առարկան (ֆիզիկա, կենսաբանություն և քիմիա), այն հանձնում են բուհում,
- զ) 1998-1999 ուստարվա այն շրջանավարտները, ովքեր դպրոցում չեն ընտրել ֆիզիկայի ավարտական քննությունը, համապատասխան մասնագիտությունների գծով այն հանձնում են բուհում,
- է) մրցույթին մասնակցելու համար, դիմորդը կարող է մասնագիտությունների և քննությունների ցանկում մեկ աստղանիշով նշված հայոց լեզվի (գրավոր) և մաթեմատիկա (գրավոր) ոչ մրցութային քննության գնահատականը փոխանցել միջնակարգ կրթության աստեսատից կամ միջին մասնագիտական և մասնագիտական տեխնիկական (հիմնական ընդհանուր կրթության հիմքով) ուսումնական հաստատությունների ավարտական փաստաթղթերից,
- ը) 2010թ. <Հայոց լեզու, գրականություն>, <Հայոց պատմություն>, <Ընդհանուր պատմություն>, <Քիմիա>, <Կենսաբանություն>, <Ֆիզիկա>, <Աշխարհագրություն>, <Օտար լեզու> (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, իսպաներեն, իտալերեն, պարսկերեն լեզուներ), <Ռուսաց լեզու> և <Մաթեմատիկա> առարկաների միասնական քննություններ չհանձնած դիմորդները քննություն են հանձնում բուհում համապատասխան առարկաների միասնական քննություններին ներկայացվող պահանջներին համապատասխան:
20. Նպատակային տեղերի մրցույթը իրականացվում է միայն ՀՀ միջնակարգ դպրոցներում որպես ուսուցիչ՝ առնվազն 1 տարի աշխատող դիմորդների միջև՝ նրանց կողմից վաստակած դրական միավորների հիման վրա:
21. Մրցութային հավասար միավորների դեպքում ըստ հերթականության առավելություն է տրվում՝
- ա) տվյալ մասնագիտությամբ աշխատող դիմորդներին,
 - բ) բոլոր տարիների մեդալակիր-դիմորդներին,
 - գ) դպրոցականների հանրապետական առարկայական օլիմպիադաների առաջին կարգի դիպլոմ ստացած դիմորդներին,
 - դ) բուհի կողմից նշված առաջին մրցութային քննությունից առավել բարձր միավոր ստացած դիմորդներին,
 - ե) դպրոցի պետական ավարտական քննություններից առավելագույն միջին գնահատական ունեցող դիմորդներին,
 - զ) տվյալ մասնագիտությանը համապատասխան միջին մասնագիտական կրթություն ստացած դիմորդներին:
22. Մրցույթի արդյունքները հաստատում է ՀՀ կրթության և գիտության նախարարը: Մրցույթով անցած դիմորդների պաշտոնական /հաստատված/ ցուցակները

հանձնվում են բուհերին հրամանագրման համար: Թափուր տեղեր առաջանալու դեպքում, այդ տեղերի մրցույթին մասնակցելու համար դիմորդները մասնագիտությունների և քննությունների ցանկում երկու աստղանիշերով նշված առարկաների համար որպես մրցութային գնահատական, կարող են դիմում-հայտում նախապես հայտագրել միջնակարգ կրթության աստեսատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի այդ առարկաների ավարտական քննությունների կամ տարեկան գնահատականը:

23. Միջնակարգ կրթության աստեսատում կամ համապատասխան ավարտական փաստաթղթում հայոց լեզվից, գրականությունից գնահատական չունեցող դիմորդները (Ա և Ա+Բ տարբերակները չհանձնած) հայոց լեզու, գրականություն (գրավոր) քննության փոխարեն կարող են քննություն հանձնել ռուսաց լեզվից միասնական (գրավոր), իսկ ռուսաց լեզվից և գրականությունից գնահատական չունեցողները՝ որևէ օտար լեզվից՝ միասնական գրավոր (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն, իտալերեն), ընդ որում՝

1/ <030700-Միջազգային հարաբերություններ>, <030600-Լրագրություն>, <031000-Հայոց լեզու և գրականություն>, <051000-Մանկավարժություն և հոգեբանություն>, <051100-Մանկավարժություն և մեթոդիկա>, <051300-Սոցիալական մանկավարժություն>, <051500-Հատուկ կրթության մանկավարժություն և հոգեբանություն>, <032300-Թարգմանչական գործ> մասնագիտությունների դեպքում հայոց լեզվի, գրականության գրավոր միասնական քննությունը պարտադիր է,

2/ <031100- Լեզվաբանություն, ռուսաց լեզու>, <032400-Ռուսաց լեզու և գրականություն> (ԵրՊԼՀ-ում), <031200- Լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն՝ ռուսաց լեզու> (ԵՊՀ) մասնագիտությունների համար սահմանված Հայոց լեզու, գրականություն (գրավոր) առարկայի փոխարեն դիմորդները կարող են քննություն հանձնել օտար լեզվից (բանավոր),

3/ <032400-Ռուսաց լեզու և գրականություն> մասնագիտության համար սահմանված <Հայոց լեզու, գրականություն> (գրավոր) քննության փոխարեն դիմորդները կարող են միասնական քննություն հանձնել օտար լեզվից (գրավոր):

24. Միջնակարգ կրթության աստեսատում անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն, իտալերեն լեզուներից գնահատական չունեցող դիմորդներն այդ լեզուների գրավոր քննության փոխարեն կարող են քննություն հանձնել ռուսաց լեզվից (գրավոր):

25. Ռուսերեն ուսուցմամբ դպրոցի շրջանավարտները քննությունները կարող են հանձնել ռուսաց լեզվով /բացառությամբ հայերեն և օտար լեզուների քննությունների/:

26. Բանավոր քննության գնահատականը դիմորդն իրավունք ունի բողոքարկելու առարկայական քննական հանձնաժողովի նախագահին առանց քննասենյակից դուրս գալու, իսկ գրավոր քննության գնահատականը՝ այն հայտնելու պահից 24 ժամվա ընթացքում: Գրավոր քննության գնահատականները բուհերը հայտնում են հաջորդ օրը, ոչ ուշ, քան մինչև ժամը 16⁰⁰:

27. Քննությունների ընթացքում ծագած վեճերը լուծում է բուհի ընդունող հանձնաժողովը:

28. Բուհերի ընդունող հանձնաժողովների, առարկայական քննական հանձնաժողովների և ընդունելությանն առնչվող մյուս ծառայությունների

փոխհարաբերությունները կանոնակարգվում են նախարարության կողմից հաստատված ՀՀ պետական բուհերի 2010թ. հեռակա ուսուցման ընդունելության կանոններով:

IV. ԴԻՄՈՐԴՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

29. Հետևյալ կարգավիճակ ունեցող դիմորդները բուհ ընդունվելու դեպքում օգտվում են համապատասխան օրենքներով սահմանված ուսման վարձի լրիվ փոխհատուցման իրավունքից,
- ա) 1-ին ու 2-րդ խմբերի և մինչև 18 տարեկան մանկուց հաշմանդամները, որոնց համար, բժշկասոցիալական փորձաքննության գործակալության կողմից տրված եզրակացության համաձայն, տվյալ մասնագիտությամբ սովորելը և հետագայում աշխատելը հակացուցված չէ,
 - բ) առանց ծնողական խնամքի մնացած մինչև 23 տարեկան երեխաները:
30. Քննությունները դրական միավորներով հանձնած դիմորդներից, պետական բյուջեի միջոցների հաշվին, մրցույթից դուրս, ընդունվում են ՀՀ պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինձառայողների երեխաները, ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած քաղաքացիները՝ համաձայն ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության և ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տված տեղեկանքների:
31. Պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված դիմորդները քննությունները դրական միավորներով հանձնելու դեպքում բուհ են ընդունվում մրցույթից դուրս, ըստ մասնագիտությունների նախարարության կողմից հաստատված տեղերի:
32. Տվյալ բուհի նախապատրաստական դասընթացները ավարտած դիմորդները, բուհ են ընդունվում մրցույթից դուրս, ավարտական քննությունների գնահատականներով, ըստ մասնագիտությունների նախարարության կողմից հաստատված տեղերի մինչև 20% չափով:

V. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

33. Դիմորդների փաստաթղթերն ընդունվում են **2010թ. օգոստոսի 3-ից մինչև սեպտեմբերի 20-ը**: Փաստաթղթերի ընդունման ժամկետը կարող է երկարաձգվել ՀՀ ԿԳ նախարարի հրամանով: Քննություններն անց են կացվում **2010թ. սեպտեմբերի 25-ից մինչև հոկտեմբերի 20-ը**: Ուսանողների հրամանագրումը կատարվում է մինչև հոկտեմբերի 25-ը:
34. Դիմումի հետ ներկայացվում են՝
- ա) միջնակարգ կրթության ատեստատը, միջին մասնագիտական և մասնագիտական տեխնիկական կրթության մասին փաստաթուղթը (*բնօրինակը*),
 - բ) 6 լուսանկար (3 x 4 սմ չափսի),

- գ) անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, զինվորական գրքույկ, ծննդյան վկայական, փախստականի վկայական, ՀՀ հատուկ անձնագիր, կացության վկայական),
- դ) զինվորական գրքույկ և զինվորական կոմիսարիատից տեղեկանք ժամկետային զինվորական ծառայությունը անցնելու մասին,
- ե) սույն կանոնների 29-30-րդ կետերով սահմանված արտոնություններից օգտվող դիմորդները ներկայացնում են համապատասխան փաստաթղթեր (1-ին կամ 2-րդ խմբի և մինչև 18 տարեկան մանկուց հաշմանդամության, ինչպես նաև զինծառայող ծնողի զոհվելու մասին), առանց ծնողական խնամքի մնացած լինելու մասին,
- զ) միջազգային և հանրապետական մրցույթների (օլիմպիադաներ, փառատոներ) դիպլոմները,
- է) նպատակային տեղերի մրցույթին մասնակցելու համար համապատասխան մարզպետարանի ուղեգիր: Հայաստանի պետական ազրարային համալսարանի նպատակային տեղերում ընդունվող դիմորդները ներկայացնում են ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից տրվող համապատասխան գործուղման ձև,
- ը) քաղվածք աշխատանքային գրքույկից (գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններում աշխատողները ներկայացնում են տեղեկանք գյուղական համայնքից)՝ սույն կետը վերաբերում է միայն Հայաստանի պետական ազրարային համալսարանի դիմորդներին,
- թ) տեղեկանք 2010թ. կենտրոնացված ընդունելության քննությունների գնահատականների վերաբերյալ,
- ժ) 2010թ./2009թ./ <Հայոց լեզու, գրականություն>, <Հայոց պատմություն>, <Ընդհանուր պատմություն>, <Քիմիա>, <Կենսաբանություն>, <Ֆիզիկա>, <Աշխարհագրություն>, <Օտար լեզու> (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, իսպաներեն, իտալերեն, պարսկերեն լեզուներ), <Ռուսաց լեզու> և <Մաթեմատիկա> առարկաների ավարտական միասնական քննությունների վկայագիր: